Ցարգոյացպատիւ և գերապայծառ տեառն Յովսեփաննոսի
վարդապետի և աբբայ նոր խոնարհութեամբ և սիրով ողջոյն ի Քրիստոս

... Գուցէ լուեալ է ձեր և զմահ Յակոբայ կաթողիկոսին հայոց, և այժմ խորհին դնել փոխանակ նորա զաբբահամ վարդապետն զառաջնորդն զմիւռնիայ...: Որդի երանելի տէր Կոմիտասին յօհաննէս թարգմանն նէապոլիսի սպանիոյ անկեալ ի բարձանց տան իւրոյ զամիսս չորս կրեաց գհիւանդութիւն կուտրուածոց ոսկերացն և վիրաց մարմնոյն, և բազում համբերութեամբ տարեալ հանգեաւ ի տէր յաւուր սրբոյն գէորգայ ի յապրիլի 23, ըստ հնոյն, որպէս և հայր նորա կատարեցաւ յաւուր տօնի դեմետրեայ վկային, և դեսպանն ետ թաղել զնա ի սանթա մարիա:...

Յամի տեառն 1763, Մայիսի 19
ի Կոստանդինուպոլիս

Ցառայ անպիտան և անարժան
Հ. Իգնատիոս Վարդապետ Մխիթարեան

ՄԽԴ.

Լիբանանու Անտոնեան վանքի պատմութեան կը պատկանին հետևեալ ծանօթութիւնները: Տէր Գէորգը, որուն կը վերագրուի Հռովմայ Անտոնեան մենաստանին վերատեսութիւնը և նաև կնիքի շարադրութիւնը, նախկին Մխիթարեան Հ. Գէորգ Այնթապցին է:

Գերյարգոյ և ամենապատիւ տեառն Յովսեփաննոսի Աբբայի խնդալ

... գաղատացի տէր յովսէփն յաղագս յառաջ տանելոյ գիրակութիւնն ճիերճեանց պօղոսին, բազում երթևեկս առնելով ի սանթոֆիցն եղև բարեկամ սերտ ընդ հայր գրիգորին լիբանանցւոց բնակելոց ի մերձակայ գնեալ տանն...:... յաղագս վերոյիշեալ տան Հ. Գրիգորին զայս ևս ծանիք, զի սա կամեցեալ ըստ ամենայնի նմանիլ մառոնիթաց, եդ ի մտի դնել զվերատեսութիւն, կամ զմակագիր ինչ ի վերայ դրան տանն. այլ քանզի անձամբ չէր բաւական առ շարադրութիւն նորին, տէր գէորգին յանձնեաց շարադրել, զոր և արարն օրինակ զայս. Մենարանս ի մարցն լիբանանցւոց. և ընդ կարգօք հօրն անտոնի զիւնորելոց. զոր ստացան յիւրեանց կալուածս յարդար գնոց. զամս ցուցցի քեզ կառաչ բառս հաշուիւ գրոց: Եւ ի հանդիպոյ հայերէն ոտանաւորիս ետ գրել զնոյն բան նաև ի լատին լեզու: Իսկ ի միջի փորագրեցին զնորագիւտ կնիքն կամ առմայն կրօնին լիբանանցւոց, գենարեալ ի նոյն տէր գէորգէն, յորում պարունակին պատուար քաղաքի, եկեղեցի, դուռն, լեառն, ծառ (և ի վերայ այս բան. որպէս զմայրս լիբանանու բազումք եղիցին) շղթայք, արծիւ, երեք գաւազանք, և եպիսկոպոսական թագ:...

Ի Հռոմ, ի Նոյեմբերի 19, 1763

Տրուպ և անպիտան ծառայ
Արսէն Ալիկեանց
կրօնաւոր Մխիթարեան

ՄԽԵ.

Էջմիածնի Սիմէոն կաթուղիկոսի կոդմանէ Պոլիս զրկուած պաշտօնական գիր մ'է այս վաւերաթուղթը, որով Նուիրակ կը կարգէ զՅարութիւն վարդապետ, այսինքն թէ «վէքիլութեան թուղթն է», ինչպէս թուղթիս տակ ուրիշ մը աւելցուցած է: